Գործ թիվ ԵԴ2/37636/02/23

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՎԵՃԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

06.12.2023թ.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Հովհաննիսյանի (այսուհետ՝ Դատարան), ծանոթանալով «Արկատ» ՍՊԸ-ի անունից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑ

«Արկատ» ՍՊԸ-ի անունից հայցադիմում է ներկայացվել դատարան՝ ըստ էության ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Ս. Գևորգյանի 19.10.2023 թվականի թիվ ԱՆ-ԳՔ-2023/2 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը 09.11.2023 թվականին մակագրվել է դատավորին, իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել է 10.11.2023 թվականին:

Դատարանի 15.11.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ սահմանելով եռօրյա ժամկետ թերությունը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Հայցադիմումը ներկայացվել է կրկին, որը 28.11.2023 թվականին մակագրվել է դատավորին, իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել է 01.12.2023 թվականին:

Դատարանը, ծանոթանալով հայցադիմումին և կից փաստաթղթերին, արձանագրում է, որ հայցվորը շտկել է Դատարանի 15.11.2023 թվականի որոշմամբ մատնանշված թերությունը և գտնում է, որ կրկին ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ, չկան հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր, հետևաբար հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին, իսկ 3-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված

լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը նույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. **լիազորված մարմին՝** պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասը՝ Դատարանը գտնում է, որ գործը ենթակա է քննության գրավոր ընթացակարգով:

Դատարանը միևնույն ժամանակ արձանագրում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել թիվ «ԱՆ-ԳՔ-2023/2» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը:

Տվյալ դեպքում թիվ ԵԴ2/34170/02/23 քաղաքացիական գործով քննության առարկա է հանդիսանում հայցվոր ընկերության հետ պատասխանողի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ: Ընդ որում, սույն գործով ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Ս. Գևորգյանի 19.10.2023 թվականի թիվ ԱՆ-ԳՔ-2023/2 որոշման հիմքում դրվել է կողմերի միջև պայմանագիրը լուծված լինելու հանգամանքը, որպիսի հարցն էլ հանդիսանում է դատական վեճի առարկա:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ գործի քննության անհնարինություն: Հետևաբար սույն գործի վարույթը ենթակա է կասեցման մինչև թիվ ԵԴ2/34170/02/23 քաղաքացիական գործով եզրափակիչ ակտ կայացնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 157-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, հետևելով 27.2-րդ գլխով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Արկատ» ՍՊԸ-ի անունից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Գործը քննել գրավոր ընթացակարգով:

3. Պատասխանող ՀՀ արդարադատության նախարարությունից պահանջել թիվ «ԱՆ-ԳՔ-2023/2» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

4. Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարություն:

6. Թիվ ԵԴ2/37636/02/23 քաղաքացիական գործի վարույթը կասեցնել մինչև մինչև ԵԴ2/34170/02/23 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:

7. Որոշումը՝ կասեցման մասով, կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ